

**ԳՅՈՒՏՏԱՎ ՖԼՈՐԵՐԻ «ԶԳԱՑԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ԸՍՏ ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ**

19 -րդ դարի արձակագիր Գյուստավ Ֆլորբերն (1821 - 1880) իր վեպերով ֆրանսիական գրականության մեջ գրավում է նույնպիսի հենասյունային դիրք, ինչպես Բողլերն իր «Չարի ծաղիկներով»: Իր ժամանակին միաժամանակ և՛ մերժվելով (բարոյախոսական պատճառներով), և՛ մեծարվելով (հզոր գրականության համար), նա այսօր հառնում է որպես իր դարի մեծագույն արձակագիրներից մեկը:

Ֆլորբերը նշանավորեց ֆրանսիական գրականությունն իր հոգեբանական վերլուծությունների խորությամբ, իրատեսական մտահոգություններով, հասարակության և անհատականությունների նկատմամբ ունեցած իր պայծառ հայացքով և իր հզոր գրելաոճով՝ «Տիկին Բովարի» (1857), «Սալամբո» (1862), «Զգացական դաստիարակություն» (1869) մեծ վեպերով կամ «Երեք պատմություն» նորավեպերի ժողովածուով :

Նրա երիտասարդական կյանքում նշանակալից իրադարձություն էր 1836թ. ամռանը Տրուվիլ-սյուր-Մեր փոքրիկ քաղաքում հանդիպումը Էլիզա Շլեզինգերի հետ, որը խորը հետք թողեց նրա կյանքի հետագա ընթացքի վրա: Այդ կրքոտ և անխոս հրապուրանքն իր ողջ հուզականությամբ Ֆլորբերն այնուհետև փոխանցեց երիտասարդ Ֆրեդերիկին՝ «Զգացական դաստիարակություն» ինքնակենսագրական վեպում և զարգացրեց հատկապես տիկին Արնուի «հայտնության» /Ֆլորբեր, 1982: 9/ հանրահայտ էջում և վերջին հանդիպման սրտակեղեք տեսարանում /Ֆլորբեր, 1982: 441/:

Այսօր մեր քննության առարկան վիպասանի «Զգացական դաստիարակություն» ինքնակենսագրական վեպի 1982 թվականին լույս տեսած թարգմանությունն է, նրա գնահատումը ըստ առաջարկված օբյեկտիվ չափանիշների: Անմիջապես նշենք թարգմանչի՝ Աբրահամ Ալիքյանի անժխտելի բազմահմտությունը և գիտելիքների առատությունը, որովհետև նման վեպ թարգմանելու համար անհրաժեշտ է իրագեկ լինել կյանքի բոլոր բնագավառներից:

Գնահատենք «Ձգացական դաստիարակություն» վեպի թարգմանությունը՝ ըստ գոյություն ունեցող օբյեկտիվ չափանիշների, որոնցից կիրառենք սուկ նրանք, որոնք կոչված են որոշելու՝

- Բառապաշարի համապատասխանության՝ համարժեքության աստիճանը

- Իմաստային շեղումները

- Ազատության չափը

- Ստեղծարարության աստիճանը

- Թարգմանության ոճը և իդիոլեկտը, երկրաոճը նաև հասարակական ոճը:

### **1. Բառապաշարի համապատասխանությունների՝ համարժեքության աստիճանը**

Նախ և առաջ հարկ է համեմատել բնագրի և թարգմանության բառապաշարի համապատասխանությունները : Ուսումնասիրենք **համարժեքության** իմաստային **մակարդակը** :

Այստեղ չենք կարող անտեսել զանազան անճշտություններ, օրինակ՝ անհաջող ընտրություն հոմանիշների շարքից.

**Criaileries républicaines !** – հանրապետական **պոռչտուքներ** (էջ 200):

Եվ **աղապատանքով** լեցուն մի հայացքով... avec un regard tout plein de **supplications...** (էջ 244):

**Navré** - խշխշան սրտով, փոխանակ՝ վշտահար, տրտում, մորմոքուն սրտով (էջ 196):

Ses petits chiens **jappaient**– Շնիկները **թնծկում** էին... (էջ 213)

Ենթադրվում է, որ **թնծկել** բառն ավելի նախընտրելի է մեզանում գործածական **կախկանձել կամ վնգստալ** բայերից:

Ce dernier mot de Rosanette **le confirmait** - Ռոզանեթի վերջին բառերն **ի բաց վանեցին** ամեն երկյուղ ու տարակույս (էջ 215) փոխանակ՝ Ռոզանեթի վերջին բառերը **հաստատում էին այն**:

**Allons donc !** dit Deslauriers. - **Մի քիչ շատ փախավ**, - ասաց Դեյլոյեն: - Սա արդեն ժարգոնային է հնչում, փոխանակ, ընդամենը՝ **«Ինչ ես ասում»:**

Il eut la **hardiesse** de l'interrompre.- Ֆրեդերիկը **ժպրիեց** ընդհատել նրան (էջ 205):

Ասել կուզի, թե **avoir la hardiesse**-ի հոմանիշների շարքում լավագույնը **ժպրիել**-ն է, այսինքն՝ **համարձակություն ունենալ** կամ

**հանդգնել:** Ընդ որում արևմտահայերենից վերցրած այս բառի բայական ձևը չենք գտնի որևէ բառարանում: Կա **ժպիռի** ածականը, **ժպիռիություն** գոյականը: Բայց չկա **ժպիռել** բայը: /Աղայան, 1976: 471/: Համարենք թարգմանչի ստեղծարարության արդյունք, այսինքն՝ դիպվածային բառ:

Ներքոհիշյալ օրինակի համար քիչ է ասել՝ անհաջող ընտրություն կամ անճաշակություն՝

**La commode - հեշտադարան** (էջ 16) - փոխանակ՝ **դարակներով պահարան**, քանի որ առաջին ռեցեպցիան անակնկալ է և՛ ունկնդրի, և՛ ընթերցողի համար:

Չեռք զարկավ (էջ 17) – il entama – փոխանակ՝ սկսեց, je m’êteindrai - վերջնականապես կշիջեմ (էջ 20).

Le Turc observa, **tout haut**, qu'on n'avait pas vu sortir M. Oudry.

Թուրքը **ի լուր ամենեցուն** հայտարարեց, թե ոչ որ չտեսավ պր. Ուդրիի դուրս գալը. - **tout haut - ի լուր ամենեցուն, բարձրաձայն**-ի փոխարեն

**Les étudiants sortaient des cafés...** - Ուսանողներն արտորանոք դուրս էին քափվում սրճարաններից... (էջ 30), փոխանակ պարզապես՝ Ուսանողները դուրս էին գալիս սրճարաններից:

Il avança, néanmoms, que c'était **une manière d'escroc**. - Բայց և այնպես այն կարծիքն հայտնեց, որ **Առումն օձ կնտողի մեկն է:** Չարմանալի համարժեք /էջ 233/:

**Veste - քիկնոցակ** (էջ 144) - փոխանակ՝ բաճկոն:

Les deux combattants se serrèrent la main, **mollement** - Հակառակորդները **թուլակի** իրար ձեռք սեղմեցին (էջ 242): Մեր կարծիքով այստեղ ևս **թուլակի** բառը **mollement** մակերաջի լավագույն համարժեքը չէ:

Le **brave** garçon (էջ 244) - **Համբուրելի** տղան կասկածելի հոմանիշ է, փոխանակ՝ **ազնիվ** կամ **լավ** տղան: Նույնը, սակայն այլ թարգմանությամբ՝ Le brave garçon – **Պատվական** տղան (էջ 244)...

Այս անհամապատասխանությունները, ըստ Բորիսեսի, «անհարազատ» համարժեքներ են: Սակայն նա նշում է, որ «անհամապատասխանությունն ընդունելի է այն դեպքում, երբ այն ելնում է թիրախ լեզվի ու մշակույթի հետաքրքրություններից և նոր արժեք է հաղորդում օտար տեքստին» / Borges, 2000: 34-48/:

Բազմիցս կրկնել ենք, որ հայերենում սեռի քերականական կարգի բացակայության պատճառով, թարգմանության մեջ պետք է դերանունը փոխարինել որևէ համապատասխան գոյականով.

Օր. D'ailleurs, **il l'aimait éperdument** ((էջ 124) – Ասենք, **նա խենթի պես է սիրել նրան** (էջ179): Համատեքստից հնարավոր չէ կռահել, թե ո՞վ է սիրել՝ տիկին Առնո՞ւն, թե՞ պրն. Առնուն, և ո՞վ է ում սիրել : Ուրեմն հարկ էր առաջին **նա**-ն փոխարինել պրն. Առնուով, կամ **երիտասարդ** գոյականով, իսկ երկրորդ **նա**-ն՝ տիկին Առնուով :

Թարգմանիչը, որ բծախնդիր է գուտ հայերեն բառերի գործածության հարցում, որի պատճառով երբեմն ընկնում է զավեշտական պատմությունների մեջ. հիշենք թերևս **la commode - հեշտադարան**(16) - փոխանակ՝ **դարակներով պահարան** օրինակը:

Le démocrate essaya ce refus **stoïquement**. - բառացի թարգմանության օրինակ՝ Սենեկալը **ստոիկորեն** տարավ այս մերժումը... փոխանակ՝ աներեր, անհողող, **արիաբար** (էջ 228):

Frédéric fut **contrarié** de la découverte.-Այս գյուտը թունդ հանեց Ֆրեդերիկի ջղերը (էջ 232):

## 2. Իմաստային շեղումներ

Թարգմանության մեջ զուգադրական քննությամբ երևան են գալիս իմաստային շեղումներ.

**Cancane** - թարգմանված է **պորտապար**, (էջ302), որը ճիշտ հակառակ ձևի պար է և ոչ մի կապ չունի արևելյան պորտապարի հետ: Այս կանացի պարը հայտնի է աշխարհում հենց **կանկան** անունով, որը եզրի նշանակություն է ձեռք բերել. կանկանը հատկապես շատ են պարել 1848 թվականի հեղափոխության ժամանակ, երբ ժողովուրդը գրավում էր Թյուիլրիի պալատը: Հետագայում պարել և պարում են կարարեներում՝ առջևի փեշերը վեր բարձրացնելով և ցուցադրելով ժանեկավոր վարտիքները:

**Համենում էր** գալ (էջ 6) – *tardait à venir* - փոխանակ՝ **հապաղում էր** կամ **ուշանում էր**

**Ոտքին տեղ անել** (էջ 142)- *parvenir* – **հասնելու** փոխարեն

**Allons donc !** dit Deslauriers. **Մի քիչ շատ փախավ**, -ասաց Ղեյլորյեն:

Սա արդեն ժարգոնային է հնչում, փոխանակ, ընդամենը՝ **Ինչ ես ասում:**

**Զանգիլի միջից** (էջ 156) - *à travers la batiste* - **բատիստ** բառը

վաղուց է մտել մեր բառապաշարի մեջ: Ընդունենք, որ սա փոխա-  
ռություն է, սակայն վաղուց ի վեր՝ մտած մեր գործածական բառա-  
պաշարի մեջ,

**Եռանդակ** (էջ 135) - **Le coupé** - փոխանակ՝ մաքուր տեղանք,  
ծառագատ տարածություն:

**3. Ստեղծարարության աստիճանը կամ թարգմանության ոճը և  
խղիղելիտը:**

Frédéric lui lança son assiette au visage. Ֆրեդերիկը *մեկեմ* իր  
ափսեն շարտեց նրա դեմքին (էջ 234): Ավելացված *մեկեմ* բառն  
ուժգնացնում է տեսարանի լարվածությունը, սակայն ցցուն է և ան-  
ճաշակ, գուցե **միանգամից**, որն ավելի հարիր է վեպի ընդհանուր  
ոճին:

Նույն կերպ հետևյալ նախադասությունների թարգմանության  
մեջ.

Ses **jolis** yeux tendres **pétillaient** - Նրա **մեղույշ** աչքերը **պճպճում**  
էին (էջ 155):

...հանկուցիչ, հազվագյուտ իրերով ծանրաբեռնված երկու սնդուկ  
(էջ 24) - deux bahuts, chargés de porcelaines, de bronzes, de curiosités  
alléchantes:

Սինույն ժամանակ չենք կարող չնշել թարգմաչի ստեղծարար-  
ության բարձր աստիճանը: Ահա մի գեղեցիկ օրինակ, որի արժեքը  
դժվար է գերազնահատել, քանզի մեր առաջարկած արժևորման չա-  
փանիշներից և ոչ մեկը այստեղ չի կարող դրական գնահատական  
չստանալ.

Un rayon lumineux, traversant les feuilles, tomba dessus; et elles  
parurent à Cisy briller **comme des vipères d'argent sur une mare de  
sang.**

**Տերևների միջից մի լուսեղեն ճառագայթ ընկավ նրանց վրա, և  
դերկոմսին այնպես թվաց, որ մի արյան լճի շուրջը չորս արծա-  
թափայլ իժեր են գեռում** (էջ 241):

Սակայն արժանին մատուցելով թարգմանչի ստեղծագործական  
հնարամտությունը, այնուամենայնիվ չենք կարող չնշել նրա չափա-  
զանցված համարձակությունը արևմտահայերենի և արևելահայերե-  
նի համադրման հարցում, երբ նա անհարկի չարաշահում է  
արևմտահայերենը.

Ամենուրեք **Անկցի՛** - **A bas !** — փոխանակ՝ **Կորչի՛**

Ամեն մեղքիս վրա - *surtout* - հատկապես - ի փոխարեն  
*Traiter sérieusement* – լուրջի առնել (էջ 244)՝ փոխանակ՝ լուրջ ընդունել

**Ի պահանջել հարկին**- անգամ հնարավոր չէ պարզել, թե ինչու է դրված այս արտահայտությունը- փոխանակ՝ **անմիջապես կամ իսկույն**: Արդյո՞ք պետք է համարել, որ սա ստեղծարարություն է:

**Il leva les yeux.** - Աչքերը վեր առավ, փոխանակ՝ հայացքը բարձրացրեց:

Frédéric pensa, **immédiatement**, l'aider dans mille occasions qui se présenteraient- Ֆրեդերիկի գլխում միտք ծագեց **ի պահանջել հարկին**՝ օգտակար լինել իրեն (էջ 154):

**Frédéric prit son bras.** -**Թևը վերցրեց**: (Ո՞վ, ո՞ւմ) - Բառացի թարգմանության վառ օրինակ, անհմաստ գեղչված ենթակա և խընդիր (էջ 220):

- **Իրույթների** /ռեալիաների/ բացատրություն, ոչ թե թարգմանություն:

Իրույթը, որպես կանոն, չի թարգմանվում: Իրույթների թարգմանության հիմնական դժվարություններն են՝ա/ համարժեքի բացակայությունը, բ/ իրույթի առարկայական նշանակության հետ մեկտեղ ազգային և պատմական կոլորիտի փոխանցման անհրաժեշտությունը /Հակոբյան, 2006: 23/:

Օրինակ՝ հետևյալ նախադասությունը, որ ամենուրեք հայտնի է որպես Ֆլոբերի ամենահայտնի թևավոր խոսքերից մեկը, թարգմանված է.

Il mangea du **gaspachio, du cari**, des merles de Corse, des **lasagnes** romaines; il but des vins extraordinaires, **du lip–fraoli et du tokay.**

*Ճաշակեց քացախով, ձեթով ու լոլիկով պատրաստված ապուր* (այսինքն՝ բացատրելով իսպանական կամ պորտուգալական **գասպաչոն**), (բաց է թողել- *cari*-ն), *կոճապղպեղ, կորսիկական կեռնեխուներ, հռոմեական արիշտա*, (այսինքն՝ **լազանիա** - այս անգամ առանց բաղադրամասերի), խմեց հռենոսյան և հունգարական չնաշխարհիկ գինիներ (չփոխանցելով գինիների անունները) (էջ 51):

կամ

Foie gras - տապակած լյարդ (էջ 155 ) –փոխանակ՝ բադի լյարդի պաշտետ կամ անգամ ֆուագրա իրույթը:

- **Իդիոմների թարգմանությունը**

Հայտնի է, որ իդիոմները (կամ հասկաբանությունները) որպես կանոն բառացի չեն թարգմանվում. դրանց համար կամ պետք է փնտրել համանմանություններ կամ կառուցել նոր իդիոմներ՝ մայրենի լեզվին համապատասխան /Հակոբյան, 2006: 24/:

Թարգմանչի ստեղծարարությունը, իրոք, ի հայտ է գալիս այստեղ: Նա կարողացել է հայերենում գտնել ֆրանսիական իդիոմների համարժեք իդիոմներ, թեև երբեմն՝ վիճելի.

Bref, il ne donnait plus la-dedans – Կարճ ասաց, իր գլուխը չես լուրզի (էջ 241):

Croyez-vous que nous sommes ici pour **plumer les canards** ... - Չեր կարծիքով, ի՞նչ է, **էջի հարսանիք սարքելու** ենք եկել այստեղ, գրող ու ցավ (էջ 241):

" Rouget est frit ! " - Էհ, ուրեմն Ռուժեի մայրը լացացրին (էջ 278):

" On peut s'en passer ", reprit Frédéric. - Առանց նրա էլ մեր օրը իրիկուն կանենք,- հարեց Ֆրեդերիկը (էջ 278):

Je me moque bien de la Maréchale ! " - Ինչ ցավս է կտրվել, Սպարապետ խաղացնեմ (էջ 225):

On pretend qu'il branle dans le manche- անկայում վիճակում է- Ասում են նրա բանը բուրդ է (էջ 149):

De cette manière, **il restait son égal**, et en communion plus intime avec lui.- Այդ ձևով **իրենք նույն կտավի մարդ էին մնում**, ավելի սերտ ու մտերիմ (էջ 280):

[...] lui fouettaient les nerfs – բունդ էին հանում նրա սիրտը

" Il a cédé à un mouvement d'humeur, **excusable dans un homme qui n'a pas le sou**. – Նա անձնատուր է եղել զայրույթի վայրկենական բռնկումին, որ **ներելի է, երբ մարդու գրպանում քամի է խաղում** (էջ 279):

Ce ne sont pas celles-là que vous fréquentez ! – Նա նրանցից չէ, ձեր իմացած փեշը կեղտոտներից (էջ 233):

ils se bornèrent à **un rafraîchissement**, dans le jardin - այգում **ակրատով** զոհացան (էջ 242):

Quel polisson vous faites ! **un homme marié** ! – Ինչպիսի՞ ստահակ եք դուք: Եվ դեռ, **ամեն մեղքիս վրա՝** ամուսնացած (էջ 243):

[Arnoux] **tripotait** [avec le Citoyen] beaucoup de choses – ինչ-որ **պղտոր ջրերում են լող տալիս:**

Le service, n'est-ce pas, sera prêt ? **je puis compter dessus** ? – Սպասքը պատրաստ կլինի, այնպես չէ՞: **Կարո՞ղ եմ հույսով լինել** (էջ 282):

Je suis même sûr que **ce gredin**—là possède quelque part une chambre, où il reçoit des petites filles!: Վիզու կկտրեմ, եթե **այս առավ- փախավի** մի տեղ սենյակ չունի և մատղաշ աղջիկներ չի ընդունում այնտեղ (էջ 243):

#### 4. Երկրաճ և հասարակական ոճ

Վեպն ընթերցելիս հաճախ ընկնում ես հակասական երկրա- ճների մեջ, մերթ քեզ թվում է, թե Ֆրանսիայում ես, XIX դարի հեղա- փոխական մթնոլորտում, և մերթ ահա Արևմտյան Հայաստանում ես, «փանջունական» միջավայրում, որտեղ արևմտահայերենը գերա- զանցում է արևելահայերենին՝ առանց որևէ հրամայականի: Եվ դա ստեղծագործության այն մասերում, երբ թարգմանությունը պետք է ընթերցողին տեղափոխի Ֆրանսիա, հստակորեն ընդգծի այդ երկ- րում իրավիճակը, այսինքն՝ ցույցադրի **երկրաճը**, իր դարի մթն- օլորտով (էջ 243): Մինչդեռ այստեղ միայն զարկ է տրված ստեղծա- րարությանը և առանց անհրաժեշտության գերազանցված է ազա- տության չափը: Սա դառնում է անթույլատրելի, բայց և բացատրվում է թարգմանչի՝ Աբրահամ Ալիքյանի հզոր **անհատական իդիոլեկտով**:

Հակառակ դեպքում ստիպված ենք ընդունել, որ սա ոչ թե թարգմանություն է, այլ՝ հարմարեցում (Genette, 1982: 46):

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ա-Չ, Երևան, Հայաստանի հր., 1976 :
2. Borges J., *The Translators of the Thousand and one Night*, in “The Translation Studies Reader”, 2000.
4. Flaubert G., *L’education Sentimentale*, Paris, Ed. du Seuil, 1976.
5. Genette G., Palimpsestes. *La littérature au second degré*, Paris, Ed. Seuil, 1982.
6. Հակոբյան Ա. *Թարգմանության տեսության հիմունքներ*, Երևան, «ԱԼՄ» հր., 2006:
7. Ֆլոբեր Գ., *Զգացական դաստիարակություն*, Երևան, «Սովե- տական գրող» հր., 1982թ.:



**А. АКОПЯН – Оценка перевода романа Гюстава Флобера “Воспитание чувств” согласно объективным критериям.** – Данная статья представляет анализ армянского перевода романа известного французского писателя XIX века Г. Флобера “Воспитание чувств”. Используются уже существующие объективные критерии оценки художественного перевода, на основе которых можно точно оценить перевод. Изобилие примеров помогает оценить в точности перевод Абраама Аликяна.

**А. НАКОВЯН – *The Assessment of Translation of Gustave Flaubert’s “Sentimental Education” Based on Objective Criteria.*** – The paper presents the analysis of the Armenian translation of G.Flaubert’s novel “Sentimental education”. The existing objective criteria of the translation assessment have been used. The abundance of the examples considered helps to adequately evaluate the work done by Abraam Aliquyan.